

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՅԻԱ» ՓԲԸ

2015թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

**Համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային
ստանդարտների (ՖՀՄՍ)**

Երևան-2015

Բովանդակություն

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	3
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	4
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	5
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	6
2015թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	7

Երևան, Գ. Լուսավորչի 15/1
 ԽՈՒ. (37410) 58-07-45
 ՖԱՔՍ. (37410) 52-69-41
 E-mail: hayaudit@hayaudit.com
 URL: www.hayaudit.com

15/1 G.Lusavorchi str., Yerevan
 tel. (37410) 58-07-45
 fax (37410) 52-69-41
 E-mail: hayaudit@hayaudit.com
 URL: www.hayaudit.com

N 04-Շ-06

«25» 04 2016թ.

Ա Ն Կ Ա Խ Ա ՈՒ Դ Ի Տ ՈՐ Ա Կ Ա Ն Ե Ջ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Ներկայացվում է «Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ Բաժնետերերի ընդհանուր ժողովին

Մեր կողմից իրականացվել է «Հայաէրոնավիգացիա» ՓԲ Ընկերության կից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, որոնք ներառում են 2015թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին տարեկան հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության ամփոփ նկարագիրը և այլ պարզաբանող տեղեկությունը:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից:

Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար:

Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ մեր կարծիքն արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

1. Ընկերության կողմից խախտվել են ՀՀՄՍ 16-ի 51 կետի պահանջը և առանձին հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները չեն վերանայվել, որի հետևանքով շահագործման մեջ գտնվող և օգտագործվող 370.312,0 հազար դրամ սկզբնական արժեքով հիմնական միջոցները հաշվեկշռային արժեք չունեն: Նշված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ ղեկավարության մոտ առկա է անորոշություն, այդ պատճառով աուդիտի ընթացքում հնարավոր չէր ճշգրտել սխալի ազդեցության չափը:

2. Ընկերության կողմից խախտվել են ՀՀՄՍ 38-ի 104 կետի պահանջը և առանձին ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները չեն վերանայվել, որի հետևանքով շահագործման մեջ գտնվող և օգտագործվող 57.310,0 հազ. դրամ սկզբնական արժեքով ոչ նյութական ակտիվները հաշվեկշռային արժեք չունեն: Նշված ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ ղեկավարության մոտ առկա է անորոշություն, այդ պատճառով աուդիտի ընթացքում հնարավոր չէր ճշգրտել սխալի ազդեցության չափը:


Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում նկարագրված հարցերի ազդեցության, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Հայաերոնավիգացիա» ՓԲ Ընկերության ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքները, սեփական կապիտալում փոփոխությունները և դրամական հոսքերը՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների:

Տնօրեն՝

Աուդիտոր՝

Որակավորման վկայական N 027
Երևան Գր. Լուսավորչի 15/8



Կ. Մարգարյան

Մ. Ստեփանյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան.	31.12.2014թ.	31.12.2015թ.
ԱԿՏԻՎՆԵՐ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	5	4603758	4244160
Հողամասեր	5	567847	567847
Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ	6	212975	955131
Ոչ նյութական ակտիվներ	7	44438	117177
Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	8	24267	21245
Կանխավճար ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման		265347	6100
Հետաձգված հարկային ակտիվներ	15	11251	10693
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		5729883	5922353
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	9	97420	79381
Առևտրական դեբիտորական պարտքեր	10	958447	658859
Տրված կանխավճարներ	10	4861	61041
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ		170000	
Բյուջեի գծով դեբիտորական պարտքեր	11	68066	228541
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	12	235626	109952
Այլ դեբիտորական պարտքեր		2857	160
Այլ ընթացիկ ակտիվներ		3096	2135
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		1540373	1140069
Ընդամենը ակտիվներ		7270256	7062422
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կանոնադրական կապիտալ	13	2660000	2660000
Կուտակված շահույթ		3203004	2947126
Պահուստային կապիտալ		399000	399000
Ընդամենը սեփական կապիտալ		6262004	6006126
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ		131086	
Հետաձգված հարկային պարտավորություններ	15	491218	520728
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		622304	520728
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	14		112530
Առևտրական կրեդիտորական պարտքեր	16	34187	35223
Ստացված կանխավճարներ	16	69033	105384
Շահութահարկի գծով պարտավորություն		52830	
Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորություն	11	88615	115320
Աշխատավարձի գծով պարտավորություն		74738	71975
Պարտավորություններ մասնակիցներին շահաբաժինների գծով			
Ընթացիկ պահուստներ	15	56253	53463
Այլ կրեդիտորական պարտքեր		10292	41673
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		385948	535568
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		7270256	7062422

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան



Գլխավոր հաշվապահ

Կ.Հակոբյան

03.03.2016թ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 7-ից 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

էջ 3' 32-ից

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծան	2014թ	2015թ
Հասույթ	17	4994985	4486129
Վաճառքի ինքնարժեք	18	(3123603)	(3153878)
Համախառն շահույթ		1871382	1332251
Վարչական ծախսեր	19	(342285)	(346190)
Այլ եկամուտներ	20	42576	50443
Այլ ծախսեր	21	(310548)	(426118)
Տոկոսային ծախսեր	21	(14215)	(446)
Տոկոսային եկամուտ	20	14608	12359
Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)	21	26773	(89954)
Այլ ոչ գործառնական օգուտ (վնաս)		(685)	291
Շահույթ մինչև հարկումը		1287606	532636
Շահութահարկի գծով ծախս	22	(250273)	(175694)
Շահույթ հարկումից հետո		1037333	356942
Այլ համապարփակ ֆինանսական արդյունք			
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք,		1037333	356942

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան

03.03.2016թ



Գլխավոր հաշվապահ

Կ.Հակոբյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող 7-ից 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Էջ 4' 32-ից

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

Հազար դրամ	Կանոնա- դրական կապիտալ	Կուտակված շահույթ	Պահուստային կապիտալ	Ընդամենը
Մնացորդն առ 01 հունվար 2014թ.	2,660,000	2541430	399,000	5600430
2014թ համապարփակ ֆինանսական արդյունք	-	1037333		1037333
Շահաբաժինների հայտարարում		(370019)		(370019)
Բաժնետոմսերի(սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով	(5740)			(5740)
Կանոնադրական կապիտալի համալրված մաս	5740	(5740)		
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2014թ.	2,660,000	3203004	399,000	6262004
2015թ համապարփակ ֆինանսական արդյունք	-	356942		356942
Շահաբաժինների հայտարարում		(612820)		(612820)
Բաժնետոմսերի(սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով				
Կանոնադրական կապիտալի համալրված մաս				
Մնացորդն առ 31 դեկտեմբեր 2015թ.	2,660,000	2947126	399,000	6006126

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան



Գլխավոր հաշվապահ

Կ.Հակոբյան

03.03.2016թ

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշ-
վետվությունների մաս կազմող 7-ից 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

էջ 5' 32-ից

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

Գործառնական գործունեությունից հոսքեր	2014թ	2015թ
Արտադրանքի, ապրանքների իրացումից և աշխատանքների, ծառայությունների մատուցումից դրամական միջոցների մուտքեր	4796007	4563951
Այլ մուտքեր	51401	65960
Նյութեր, ապրանքների ձեռք բերումից	(91914)	(63642)
Աշխատանքների, ծառայությունների ձեռքբերումից	(568886)	(788052)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(1655584)	(1601564)
Շահութահարկի վճարում	(266800)	(223200)
Վճարումներ բյուջե	(637297)	(783217)
Վճարումներ պարտադիր սոցիալական վճարի ծով	(26421)	(26424)
Այլ ելքեր	(161835)	(134644)
Ընդամենը գործառնական գործունեությունից զուտ հոսքեր	1438671	1009168
Ներդրումային գործունեությունից հոսքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	492	700
Տրամադրված ավանդի	(270000)	-
Տրամադրված ավանդի տոկոսային եկամուտ	-	12359
Տրամադրված ավանդի հետ վերադարձից մուտք	100000	170000
Տրամադրված փոխարության գումարի վերադարձից մուտք	4860	3780
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերումից	(529640)	(674083)
Ընդամենը ներդրումային գործունեությունից զուտ հոսքեր	(694288)	(487244)
Ֆինանսական գործունեությունից հոսքեր		
Ստացված վարկերից և փոխառություններից	127538	113476
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	(427950)	(119198)
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	(384234)	(612820)
Ֆինանսական այլ գործունեությունից մուտք	5917	-
Ֆինանսական այլ գործունեությունից ելք(տոկոսներ)	(1066)	(446)
Ընդամենը ֆինանսական գործունեությունից զուտ հոսքեր	(679795)	(618988)
Ընդամենը զուտ հոսքեր	64588	(97064)
Արտադրության փոխարժեքային տարբերություններ	(11453)	(28610)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	182491	235626
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի 2015	235626	109952

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան

Գլխավոր հաշվապահ

Կ.Հակոբյան

03.03.2016թ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 7-ից 32-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

էջ 6՝ 32-ից

2015թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր դրույթներ

ա) Ընկերության նկարագիրը և գործունեությունը

«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից և ստացել իրավաբանական անձի պետական գրանցման վկայական 1997թ. Օգոստոսի 7-ին:

Ընկերությունն իրավաբանական անձ համարվող, շահույթ ստանալու նպատակ հետապնդող (առևտրային) կազմակերպություն է, որը ստեղծվել է և իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական օրենսգրքին», «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքին, գործող այլ իրավական ակտերին և կանոնադրությանը համապատասխան:

Ընկերության

Անվանումը՝	«ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ» ՓԲԸ
Գրանցման համարը՝	271.070.01467
Գրանցման վկայականը՝	01U036186
Գրանցման ամսաթիվը՝	07.08.97թ.
Գտնվելու վայրը՝	ՀՀ ք.Երևան-0042, Զվարթնոց ՕԿ, Ի Գասպարյան 33
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	01216144

Ընկերության ստեղծման նպատակը տնտեսական գործունեություն (այդ թվում՝ ՀՀ օդային տարածքի օգտագործման և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ՀՀ-ում գործող պահանջներին համաձայն ավիացիայի բնագավառում կիրառվող տեխնիկական սարքավորումների զարգացման ապահովման) իրականացնելու ճանապարհով շահույթի ստացումն է:

Ընկերությունը հիմնականում զբաղվում է

- ՀՀ օդային տարածքում օդային երթևեկության կազմակերպմամբ և ապահովմամբ.
- ՀՀ օդային տարածքում իրականացվող չվերթերի աէրոնավիագացիոն տեղեկատվության ապահովմամբ.
- Թռիչքների ռադիոտեխնիկական ապահովման և կապի սարքավորումների տեխնիկական ներդրմամբ, սպասարկմամբ, մոնիտինգմամբ, վերանորոգմամբ և շահագործմամբ ըստ գործող նորմերի.
- Իր պատասխանատվության տակ գտնվող օդային տարածքում թռիչքների կառավարմամբ
- Սահմանված կարգով թռիչքների կազմակերպման ապահովմամբ.
- Հյուրանոցների, պանսիոնատների, քեմփինգների, հրապարակների և ժամանակավոր բնակության այլ տեղերի ձեռք բերմամբ և կազմակերպմամբ.
- Քաղաքացիական շինարարությամբ, շինարարական տեղամասերի նախապատրաստմամբ, կառուցմամբ, սարքավորմամբ և շինարարության ավարտմամբ:

Աշխատակիցների ցուցակային թվաքանակն առ 31.12.2015թ. 392 մարդ է :

բ) Կորպորատիվ կառուցվածքը

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,660,000 հազար (Երկու միլիարդ վեց հարյուր վաթսու միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 35 սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 76,000 հազար ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

Ընկերության միակ բաժնետերը Հայաստանի Հանրապետությունն է: Վերջինս իրականացնում է

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

բաժնետոմսերի կառավարումը ՀՀ կառավարության լիազորված մարմնի՝ ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից:

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինն Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ կամ օրենքով վերապահված են Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կամ գլխավոր տնօրենի իրավասությանը, իրականացնում է Ընկերության խորհուրդը:

Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության գլխավոր տնօրենը:

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1 Հայրարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան:

2.2 Չափման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

2.3 Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որն Ընկերության ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4 Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները ստորագրվել են 03.03.2016թվականին գլխավոր տնօրեն Արթուր Գասպարյանի և գլխավոր հաշվապահ Կարինե Հակոբյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Ընկերության սովորական գործունեությունից առաջացող տնտեսական օգուտների համախառն ներհոսքն է, որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում մասնակիցների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Ընկերության ակտիվների (նյութերի, հիմնական միջոցների) վաճառքից եկամուտը կամ օգուտը չի դասակարգվում որպես հասույթ:

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով:

Աէրանավիգացիոն ծառայությունների մատուցումից հասույթը չափվում է հետևյալ կերպ.

- ա) թռիչք-վայրէջքների սպասարկումից հասույթը չափվում է սպասարկված օդանավերի առավելագույն թռիչքային քաշից /MTOW/ ելնելով՝ կիրառելով չափման միավորի (տոննայի կամ նրա մասի) համար ՀՀ Կառավարությանն առընթեր Քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության հրամանով հաստատված սակագները:

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

բ) մայրուղային թռիչքերի սպասարկումից հասույթը չափվում է ելնելով մատուցված ծառայության ծավալից՝ ծառայության միավորներով (կախված է սպասարկված օդանավերի առավելագույն թռիչքային քաշից սպասարկված թռիչքային հեռավորությունից՝ կիրառելով ծառայության միավորի համար Օդային նավագնացության անվտանգության պահպանման եվրոպական կազմակերպության (EUROCONTROL) հաստատած սակագները (դրույքաչափերը)։

գ) աէրոնավիգացիոն տեղեկատվության տրամադրման ծառայություններից հասույթը տարեկան բաժանորդագրության դեպքում ճանաչվում է գծային մեթոդով, իսկ խտասկավառակով տեղեկատվության տրամադրման դեպքում՝ տրամադրման պահին։

Երբ այլ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր է արժանահավատորեն գնահատել, գործարքից հասույթը ճանաչվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանի հիման վրա։ Գործարքի արդյունքը կարելի է արժանահավատորեն գնահատել, եթե բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը։

բ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն դեպի ընկերություն։

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործարքի ավարտվածության աստիճանը։

դ) հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի համար կատարված և գործարքն ավարտելու համար անհրաժեշտ ծախսումները։

Երբ ծառայությունների մատուցման գործարքի արդյունքը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել, հասույթ ճանաչվում է միայն ճանաչված այն ծախսերի չափով, որոնք հավանական է, որ կփոխհատուցվեն։

Տոկոսային հասույթը ճանաչվում է՝ կիրառելով արդյունավետ տոկոսի մեթոդը։

Ապրանքների և արտադրանքի վաճառքից ստացվող հասույթը ճանաչվում է, երբ բավարարված են

հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Ընկերությունը գնորդին է փոխանցում ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը։

բ) Ընկերությունը չի պահպանում ո՛չ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ո՛չ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկում։

գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը։

դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն ընկերություն։

ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել։

3.2. Հարկեր

Ընթացիկ շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն։ Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ։

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են՝

- ա) գույքիլից, եթե դրա ամորտիզացիան հարկային նպատակներով նվազեցման ենթակա չէ,
- բ) ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Ընկերությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են որպես եկամուտ կամ ծախս և ներառվում են տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որն առաջանում է՝

- ա) գործարքից կամ իրադարձությունից, որը, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս՝ կա՛մ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, կա՛մ ուղղակիորեն սեփական կապիտալում, կամ
- բ) ձեռնարկատիրական գործունեության միավորումից:

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընթացիկ և հետաձգված հարկը ճանաչվում է շահույթից կամ վնասից դուրս, եթե հարկը վերաբերում է այն հոդվածներին, որոնք, նույն կամ մեկ այլ ժամանակաշրջանում, ճանաչված են շահույթից կամ վնասից դուրս: Հետևաբար, ընթացիկ և հետաձգված հարկերը, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝

- ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.
- բ) ուղղակիորեն սեփական կապիտալում, ճանաչվում են ուղղակիորեն սեփական կապիտալում (օրինակ՝ չբաշխված շահույթի սկզբնական մնացորդի ճշգրտում, որն առաջանում է կա՛մ հետընթաց կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունից, կա՛մ սխալի ուղղումից):

Ընկերությունն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

- ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,
- բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Ընկերությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

- ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվներն ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց,
- բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից նույն հարկատուից:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Ընկերություն և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը՝ հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները՝ համաձայն Ընկերության որդեգրած քաղաքականության: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ վնասը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցիչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Որոշ դեպքերում, երբ ակտիվում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները կլանվում են մեկ այլ ակտիվի արտադրության ընթացքում, այդ դեպքում մաշվածության գումարը կազմում է այդ ակտիվի արժեքի մի մասը և ներառվում է դրա հաշվեկշռային արժեքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է՝ ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՄ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված (օտարման խմբում ներառվելու) և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

• Շենքեր,	2-67	տարի
• Կառուցվածքներ	2-24	տարի
• Փոխանցող հարմարանքներ	3-35	տարի
• Մեքենաներ և սարքավորումներ	1-24	տարի
• Տրանսպորտային միջոցներ	1-10	տարի
• Արտադրատնտեսական գույք, գործիքներ	1-35	տարի

3.4. Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կհոսեն Ընկերություն, և ակտիվի արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել Ընկերության կողմից և ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, ներկայացված են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և արժեզրկումից կորուստները:

Անորոշ օգտակար ծառայությամբ ոչ նյութական ակտիվները չեն ամորտիզացվում, դրանք չափվում են ինքնարժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

• Համակարգչային ծրագրեր	3-10 տարի
• Լիցենզիաներ, արտոնագրեր	3-10 տարի
• Այլ ոչ նյութական ակտիվներ	8-10 տարի

2015թ. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

3.5. Արտարժույթային գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Ընկերության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով՝ արտարժույթով, իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժույթային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.6. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման ենթադրվող ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի մշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները, բացի գերնորմատիվային և ժամանակաշրջանի ծախսերից:

Պաշարների ինքնարժեքի մեջ չեն ներառվում և դրանց կատարման ժամանակաշրջանում ծախս ճանաչվող ծախսումներ են՝

- ա) գերնորմատիվային ծախսումները՝ կապված նյութերի, աշխատուժի և արտադրական այլ ծախսումների գերաժախսի հետ.
- բ) պահպանման ծախսումները, բացառությամբ եթե դրանք անհրաժեշտ են արտադրության գործընթացում՝ նախքան հաջորդ արտադրական փուլին անցնելը.
- գ) վարչական վերադիր ծախսումները, որոնք կապված չեն պաշարները ներկա գտնվելու վայր հասցնելու կամ պատշաճ վիճակի բերելու հետ.
- դ) վաճառքի ծախսումները:

Փոխադարձ փոխարինելի հանդիսացող պաշարների ինքնարժեքը որոշվում է կիրառելով «միջին կշռված» բանաձևը:

3.7. Ֆինանսական գործիքներ

(i) Սկզբնական ճանաչումը և չափումը

Ընկերությունը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ նա դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվն ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող», ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով, այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա՝

- ա) պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները,
- բ) Ընկերության սեփականատերերի հետ գործարքի (որոնցում նրանք գործում են որպես սեփականատեր իրենց կարգավիճակով) արդյունք է, որի դեպքում այդ տարբերությունը ճանաչվում է սեփական կապիտալում:

(ii) Ապաճանաչումը

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

- ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ
- բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ընկերությունը փոխանցում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ այն՝

- ա) փոխանցում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները. կամ
- բ) պահպանում է ֆինանսական ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման պայմանագրային իրավունքները, սակայն ստանձնում է այդ դրամական միջոցների հոսքերը մեկ կամ ավելի ստացողների (վերջնական ստացողներ) վճարելու պայմանագրային պարտականություն՝ ըստ համաձայնության, որը համապատասխանում է հետևյալ երեք պայմաններին.
 - բ1) Ընկերությունը պարտականություն չունի գումարներ վճարելու վերջնական ստացողներին, եթե այն չի հավաքագրում համարժեք գումարներ սկզբնական ակտիվից: Ընկերության կողմից մայր գումարի և շուկայական տոկոսադրույքով հաշվեգրված տոկոսի ամբողջությամբ հետ ստանալու իրավունքով տրված կարճաժամկետ կանխավճարները չեն խախտում այս պայմանը,
 - բ2) փոխանցման պայմանագրի պայմաններով՝ Ընկերությանն արգելվում է վաճառել կամ գրավադրել սկզբնական ակտիվը, բացառությամբ վերջնական ստացողների մոտ գրավադրման՝ որպես դրամական միջոցների հոսքերը նրանց վճարելու պարտականության դիմաց ապահովում,
 - բ3) Ընկերությունը պարտականություն ունի վերջնական ստացողների անունից՝ առանց էական ուշացման փոխանցել իր կողմից հավաքագրված ցանկացած դրամական միջոցների հոսքեր: Ի լրումն՝ Ընկերությունն այդպիսի դրամական միջոցների հոսքերը վերաներդնելու իրավունք չունի, բացառությամբ դրամական միջոցներում և դրանց համարժեքներում ներդրումների, որոնք կատարվում են վերջնահաշվարկի այն կարճ ժամանակահատվածի

2015թ. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ընթացքում, որն ընկնում է հավաքագրման ամսաթվի և վերջնական ստացողներին պահանջվող փոխանցման ամսաթվի միջև, և երբ նման ներդրումներից վաստակած տոկոսները փոխանցվում են վերջնական ստացողներին:

Ընկերությունն ապաճանաչում է փոխանցված ֆինանսական ակտիվը, եթե՝

- ա) փոխանցվել են նաև ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ
- բ) ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները ոչ փոխանցվել, ոչ էլ պահպանվել են, սակայն Ընկերությունը չի պահպանել ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցման ընթացքում առաջացած կամ պահպանված որևէ իրավունք և պարտականություն ճանաչվում է առանձին՝ որպես ակտիվ կամ պարտավորություն:

Եթե Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, սակայն պահպանել է ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա այն շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը՝ դրանում իր շարունակվող ներգրավվածության չափով:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) Հերազա չափումը

Սկզբնական ճանաչումից հետո այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումները, որոնք Ընկերությանն այդ կազմակերպությունների նկատմամբ տալիս են նշանակալի ազդեցություն, վերահսկողություն կամ համատեղ վերահսկողություն, Ընկերության ֆինանսական հաշվետվություններում չափվում են բաժնեմասնակցության մեթոդով: Նման իրավունք (ազդեցություն) չապահովող ներդրումները բաժնային գործիքներում, ներառյալ այդպիսի գործիքների հետ կապված ածանցյալները, չափվում են իրական արժեքով, բացառությամբ այն գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել: Այդպիսիք չափվում են սկզբնական արժեքով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները, տրամադրած և ստացած փոխառությունները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

2015թ. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները, ինչպես նաև վաճառքի համար մատչելի (ՎՀՄ) ֆինանսական ակտիվները (բացառությամբ բաժնային գործիքների, որոնք գործող շուկայում չունեն գնանշված շուկայական գին, և որոնց իրական արժեքը չի կարող արժանահավատորեն չափվել, ինչպես նաև այդպիսի բաժնային գործիքների հետ կապված ածանցյալ գործիքներ) սկզբնական ճանաչումից հետո չափվում են իրական արժեքով: Իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ ստորև նշվածի:

ՎՀՄ ֆինանսական ակտիվների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, բացառությամբ այդ փոփոխության մեջ հեջավորված ռիսկին վերագրվող մասի, փոխարժեքային տարբերությունների, արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսի և բաժնային գործիքների գծով հայտարարված շահաբաժինների, որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում: ՎՀՄ ֆինանսական ակտիվի ապաճանաչման կամ արժեզրկման ժամանակ, նախկինում այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված և սեփական կապիտալում կուտակված օգուտները կամ կորուստները՝ որպես վերադասակարգման ճշտում, հանվում են սեփական կապիտալից և ճանաչվում շահույթում կամ վնասում:

(iv) Արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է որևէ անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկված է: Եթե գոյություն ունի որևէ նման վկայություն, ապա Ընկերությունը պետք է որոշի արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկման անկողմնակալ վկայությունը ներառում է ակտիվի տիրապետողին հայտնի դարձած դիտարկելի տվյալները կորստի հետևյալ դեպքերի վերաբերյալ՝

- ա) թողարկողի կամ փոխառուի նշանակալի ֆինանսական դժվարությունները.
- բ) պայմանագրի խախտումը, օրինակ՝ տոկոսների կամ հիմնական գումարի չվճարումը կամ վճարման ուշացումը.
- գ) փոխառուի ֆինանսական դժվարությունների հետ կապված տնտեսական կամ իրավական պատճառներով փոխառուի կողմից փոխառուին զիջումների տրամադրումը, որը փոխատուն այլապես չէր նախատեսի.
- դ) փոխառուի հավանական սնանկացումը կամ այլ ֆինանսական վերակազմավորումը.
- ե) ֆինանսական դժվարությունների հետևանքով այդ ֆինանսական ակտիվի համար գործող շուկայի վերացումը. կամ
- զ) դիտարկելի տվյալներ այն մասին վկայող, որ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրանց սկզբնական ճանաչումից հետո առկա է գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի չափելի նվազում, թեև դեռևս հնարավոր չէ որոշել այդ նվազումը խմբի առանձին ֆինանսական ակտիվների գծով, ներառյալ՝
 - զ1) խմբում փոխառուների վճարումների կարգավիճակի բացասական փոփոխությունները (օրինակ՝ վճարումների ուշացումների թվի ավելացումը կամ վարկային քարտերով փոխառուների թվի ավելացումը, որոնք հասել են իրենց պարտքային սահմանաչափին և կատարում են նվազագույն ամսական վճարում). կամ

2015թ. Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

զ2) ազգային կամ տեղական տնտեսական պայմանները, որոնք կոռեկցիայի մեջ են խմբի ակտիվների գծով ձախողումների հետ (օրինակ՝ փոխառուների աշխարհագրական շրջանում գործազրկության մակարդակի աճը, համապատասխան շրջանում հիփոթեքային անշարժ գույքի գների նվազումը, նավթի գնի նվազումը նավթարտադրողներին տրամադրած փոխառության գծով ակտիվների դեպքում, կամ արդյունաբերության ճյուղի պայմանների բացասական փոփոխությունները, որոնք ազդում են խմբի փոխառուների վրա):

Արժեզրկման անկողմնակալ վկայության առկայության դեպքում արժեզրկումից կորստի գումարը չափվում է որպես ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական միջոցների հոսքերի ներկա արժեքի միջև տարբերություն (բացառելով ապագա պարտքային վնասները, որոնք դեռևս տեղի չեն ունեցել)՝ զեղչված ֆինանսական ակտիվի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով (այսինքն՝ սկզբնական ճանաչման ժամանակ հաշվարկված արդյունավետ տոկոսադրույքով): Սկզբնական արդյունավետ տոկոսադրույք չունեցող գործիքների դեպքում զեղչումն իրականացվում է համանման ֆինանսական ակտիվի համար ընթացիկ շուկայական հատույցադրույքով: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ նվազեցնելով ակտիվի հաշվեկշռային արժեքը՝ օգտագործելով կարգավորող հաշիվ:

3.8. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը՝ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Ակտիվի գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.9. Պահուսպներ

Պահուստը ճանաչվում է, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Ձեռնման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն արդեն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.10. Իրական արժեքի որոշում

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջում են իրական արժեքի որոշում ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների համար: Իրական արժեքները որոշվել են չափման և բացահայտման նպատակով՝ հիմք ընդունելով ստորև ներկայացված մեթոդները: Կիրառելիության դեպքում, իրական արժեքների որոշման ժամանակ կատարած ենթադրությունների մասին լրացուցիչ տեղեկատվությունը բացահայտվում է ակտիվին կամ պարտավորությանը վերաբերող ծանոթագրությունում:

(ա) Հիմնական միջոցներ

Գույքի շուկայական արժեքն այն գնահատված գումարն է, որով գույքը գնահատման ամսաթվի դրությամբ կարող է փոխանակվել պատրաստական գնորդի և պատրաստական վաճառողի միջև՝ «անկախ կողմերի միջև գործարքում» համապատասխան շուկայավարում կատարելուց հետո, որտեղ կողմերը գործում են իրազեկորեն, խոհեմորեն և առանց հարկադրանքի: Մեքենասարքավորումների, տնտեսական միջոցների շուկայական արժեքը հիմնված է համանման միավորների համար գնանշվող շուկայական արժեքի վրա:

Գնանշված շուկայական արժեքի բացակայության դեպքում հիմնական միջոցների իրական արժեքը հիմնականում որոշվում է՝ կիրառելով մաշեցված փոխարինման արժեքը: Այս մեթոդը դիտարկում է հիմնական միջոցների վերականգնման կամ փոխարինման ծախսերը՝ հաշվի առնելով ֆիզիկական, ֆունկցիոնալ կամ տնտեսական մաշվածությունը կամ հնացածությունը:

(բ) Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր ու տրված փոխառություններ

Առևտրական և այլ դեբիտորական պարտքերի ու տրված փոխառությունների իրական արժեքը գնահատվում է որպես հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով գեղջված դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեք: Այս իրական արժեքը որոշվում է սկզբնական ճանաչման և հետագայում՝ բացահայտման նպատակներով:

(գ) Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ

Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը, որը որոշվում է սկզբնապես ճանաչման, իսկ հետագայում՝ բացահայտման նպատակներով, հաշվարկվում է՝ հիմք ընդունելով մայր գումարի և տոկոսագումարների գծով դրամական միջոցների ապագա հոսքերի ներկա արժեքը՝ գեղջված հաշվետու ամսաթվի դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով:

3.11. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են որակավորվող ակտիվների ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը (որոնք այն ակտիվներն են, որոնց անհրաժեշտ է ժամանակի զգալի հատված, որպեսզի պատրաստ լինեն, ըստ նշանակության, օգտագործման կամ

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

վաճառքի համար), ավելացվում են այդ ակտիվների ինքնարժեքին, մինչև որ ակտիվներն, ըստ էության, պատրաստ են դառնում դրանց մտադրված օգտագործման կամ վաճառքի համար:

Որակավորվող ակտիվի համար ձեռք բերված փոխառության ժամանակավորապես ազատ միջոցների ներդրումից ստացված եկամուտը նվազեցվում է այդ ակտիվի վրա կապիտալացման ենթակա փոխառության ծախսումներից:

Փոխառության մյուս ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են:

3.12. Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

- a. Աշխատավարձը
- b. սոցիալական ապահովության վճարները,
- c. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսին է վճարովի տարեկան արձակուրդը,
- d. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայությունների դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Ընկերությունն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Ընկերությունն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումը՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը), ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություններ, որոնք ավելացնում են ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումը չափվում է այն լրացուցիչ գումարով, որն Ընկերությունն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Ընկերությունը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումը ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Ընկերության ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավար

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

րության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ակտիվներում մարմնավորված ապագա տնտեսական օգուտները սպառվում են հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոններ՝ տնտեսական, ֆիզիկական կամ տեխնոլոգիական մաշվածությունները, հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազման: Ղեկավարությունը մնացորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Ընկերությունը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ու սպասարկման պլաններից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2 Ակտիվների արժեզրկումը և պահուստների հաշվառումը Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Ընկերությունը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի հաշվեկշռային արժեքից նվազման հայտանիշները: Փոխհատուցվող արժեքն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և վաճառքի համար անհրաժեշտ ծախսերով նվազեցված ակտիվի իրական արժեքներից մեծագույնը: Եթե հայտնաբերվում են նվազման հայտանիշներ, հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող արժեքը: Նվազման չափը հաշվառվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ այն ժամանակահատվածում, որում նվազումը բացահայտվել է: Եթե պայմանները փոխվում են, և ղեկավարությունը որոշում է, որ ակտիվների արժեքն ավելացել է, արժեզրկման պահուստը ամբողջությամբ կամ մասամբ հակադարձվում է: Արժեզրկման խմբային գնահատման ենթակա դեբիտորական պարտքերի խմբում ապագա դրամական միջոցների հոսքերը գնահատվում են պայմանագրային դրամական հոսքերի և համապատասխան ակտիվների ժամկետանց դառնալու գծով ղեկավարության փորձի հիման վրա, որը հետևանք է անցյալ ժամանակաշրջանի կորստի դեպքերի և ժամկետանց գումարների վերականգնման հաջողության: Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտարկելի տվյալների հիման վրա:

5. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր	Կառուցվածքներ, փոխանցող հարմարանքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատն տեսական գույք, այլ հմ	Հողամասեր	Ընդամենը
Արժեք							
Մնացորդ առ 31.12.2014թ.	1247975	228905	4917077	207322	71675	567847	7240801
Ձեռքբերում			151207		2506		153713
Կապիտալացում	33380						33380
Պակասեցում			(230)	(10805)	(616)		(11651)
Մնացորդ առ 31.12.2015թ.	1281355	228905	5068054	196517	73565	567847	7416243
Մաշվածություն							
Մնացորդ առ 31.12.2014թ.	(148915)	(43764)	(1733049)	(92742)	(50726)	-	(2069196)
Տարվա մաշվածություն	(37733)	(10810)	(465669)	(26788)	(5211)		(546211)
Պակասեցում			230	10325	616		11171
Մնացորդ առ 31.12.2015թ.	(186648)	(54574)	(2198488)	(109205)	(55321)	-	(2604236)
Հաշվեկշռային արժեք							
Առ 31.12.2014թ.	1099060	185141	3184028	114580	20949	567847	5171605
Առ 31.12.2015թ.	1094707	174331	2869566	87312	18244	567847	4812007

31.12.2015թ. դրությամբ ընկերության հիմնական միջոցների սահմանափակումներ չկան:

6. Օգտագործման համար ոչ մատչելի հիմնական միջոցներ առ 31.12.2015թ

Անվանացանկ	Սկզբնական մնացորդ Դտ	Շրջանառություն ն Դտ	Շրջանառություն ն Դտ	Վերջնական սաղո Դտ
<<ԳԱԼԱԿՏԻԿԱ.>> համակարգ		229607		229607
Անխափան սնուցման աղբյուր (UPS 15 կՎԱ, INFOSEC		27591	27591	
Անխափան սնուցման աղբյուր Eaton 9355-10-NHS-10-32x9Ah		5417	5417	
ԱՏԻՍ համակարգ		18000		18000
Արդիականացված P3D- WS/EVN SW համակարգ	174578	532898		707476
Բաշխիչ բջիջ KCO298		6730	6730	
Բաշխիչ բջիջ SM6		9500	9500	
Թվային միկրոալիքային ռադիոհամակարգեր CFIP- 108	38397	9100	47497	
ՍՄԱԲ -S սարք		19075	19075	
Էլ.տաքացուցիչ		48		48
Այլ հիմնական միջոց		37903	37903	
Ընդամենը	212975	895869	153713	955131

Կրեդիտային շրջանառությամբ արտացոլված 153713 հ.դրամ արժեքով ոչ ընթացիկ ակտիվները հանձնվել են շահագործման:

7. Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Ծրագրեր	Լիցենզիաներ, արտոնագրեր	Այլ	Ընդամենը
Արժեք				
Մնացորդ առ 31.12.2014	67680	9388	46900	123968
Ձեռքբերում	10000	900	70921	81821
Պակասեցում		(1733)		(1733)
Մնացորդ առ 31.12.2015	77680	8555	117821	204056
Ամորտիզացիա				
Մնացորդ առ 31.12.2014	(56862)	(8580)	(14088)	(79530)
Տարեկան ամորտիզացիա	(3227)	(606)	(5249)	(9082)
Պակասեցում		1733		1733
Մնացորդ առ 31.12.2015	(60089)	(7453)	(19337)	(86879)
Հաշվեկշռային արժեք				
Առ 31.12.2014	10818	808	32812	44438
Առ 31.12.2015	17591	1102	98484	117177

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Տարվա ընթացքում հաշվեկշռային արժեք չունեցող 1733 հ.դրամ սկզբնական արժեքով ոչ նյութական ակտիվները դուրս են գրվել(ապաճանաչվել են):

8.Ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ

8.1 Սույն հոդվածում 31.12.2015թ դրությամբ առկա 21245 հազ դրամ գումարը իրենից ներկայացնում է կապակցված կողմ կազմակերպությանը(Ավիաբուժ Բ/կ ՓԲԸ) տրված փոխառության գումարի զեղչված արժեքը (փոխառության չզեղչված գումարը կազմել է 35000 հազ դրամ): Փոխառությունը տրամադրվել է ՀՀ դրամով, անտոկոս, յոթ տարի մարման ժամկետով՝ ամսական հավասարաչափ մարման գրաֆիկով: Տրամադրված գումարից վերադարձվել է 12320 հազ.դրամ Փոխառությունը զեղչվել է տարեկան 12 տոկոս տոկոսադրույքով, զեղչի գումարը կազմել է 4193 հազ դրամ, տոկոսային եկամուտը (զեղչի հետպտույտը) կազմել է 2758 հազ դրամ ($21245=35000- 12320- 4193 + 2758$):

8.2 Ոչ ռեզիդենտ կազմակերպություններին տրամադրվել է 11571.30 եվրո ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար ,որը 31.12.2015թ.-ի դրությամբ դրամով կազմում է 6100.00 հազար դրամ:

9.Պաշարներ

հազար դրամ	31.12.2014	31.12.2015
Նյութեր, գնովի դետալներ	44246	37482
Վառելիք	32238	22023
Վերամշակմաբ հանձնված նյութեր	19026	19197
Այլ	63	90
Արագամաշ առարկաներ	1847	589
Ընդամենը	97420	79381

Պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել: Պաշարների սեփականության իրավունքի սահմանափակումներ չկան:

10.Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր

հազար դրամ	31.12.2014		31.12.2015	
Ծառայությունների և այլ վաճարքների գծով	958447		658859	
Այլ դեբիտորական պարտքեր	2857		160	
Այլ ընթացիկ ակտիվներ ա.թ.	3096		2135	
Ընթացիկ ակտիվներ հաշվանցումն հետաձգված անուղղակի հարկերի գծով	2132		2135	
Տրված ընթացիկ կանխավճարներ	4861		61041	
Ընդամենը	969261		722195	
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորստի պահուստ	60057		0	
Ընդամենը	1029318		722195	

10.1 Տարանցիկ չվերթներից առաջացած դեբիտորական պարտքերի հաշվառումը իրականացվում է Եվրոկոնտրոլ միջազգային կազմակերպությունը: Այդ կազմակերպության հետ կնքված փոխադարձ ակտի համաձայն 31.12.15թ. դրությամբ առևտրային դեբիտորական պարտքի մնացորդը կազմում է

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

703371 հ.դրամ, սակայն հաշվապահական հաշվառման տվյալներով կազմում է 630587 հ.դրամ, կամ տարբերությանը կազմում է 72784 հ.դրամ (137667.81 եվրո): Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 06.10.2014թ կայացված վճռով <Արմավիա> ՍՊԸ-ն սնանկ է ճանաչվել: Ընկերության կողմից 100916.22 եվրո <Արմավիա> ՍՊԸ տարանցիկ չվերթներից առաջացած դեբիտորական պարտքի մնացորդը ճանաչվել է արժեզրկումից և անհավաքագրելությունից կորուստի գծով ծախս՝ առանց պահուստաֆոնդ ստեղծելու: 2015թ. հուլիս ամսին Եվրոկոնտրոլ մ/կ կողմից վերը նշված գումարից վճարել է 25471.54 եվրո, ուստի առ 31.12.15թ դրությամբ այդ պարտքի մնացորդը կազմել է 39887 հ.դրամ (75444.68 եվրո), որի գծով Եվրոկոնտրոլ մ/կ արժեզրկումից և անհավաքագրելությունից կորուստը դերևս չի ճանաչվել: Միաժամանակ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարանի 02.11.2015թ կայացված վճռով <Էյր Արմենիա> ՓԲԸ-ն սնանկ է ճանաչվել: Ընկերության կողմից 62223.13 եվրո <Էյր Արմենիա> ՓԲԸ տարանցիկ չվերթներից առաջացած դեբիտորական պարտքի մնացորդը ճանաչվել է արժեզրկումից և անհավաքագրելությունից կորուստի գծով ծախս՝ առանց պահուստաֆոնդ ստեղծելու: Եվրոկոնտրոլ մ/կ կողմից 32897 հ.դրամ (62223.13 եվրո) արժեզրկումից և անհավաքագրելությունից կորուստը դերևս չի ճանաչվել:

Մինչև 31.12.2009թ. ԱՄՆ ռազմական ինքնաթիռների մատուցված աէրոնավիգացիոն ծառայությունների գծով դեբիտորական պարտքը ապաճանաչվել է:

11. Այլ հարկերի գծով դեբիտորական և կրեդիտորական պարտքեր

Բյուջեի գծով դեբիտորական պարտքի մնացորդը կազմում է 228541 հ.դրամ, որից ԱԱՀ գծով (բյուջեից վերադարձման ենթակա)՝ 203257 հ.դրամ , շահութահարկի գծով՝ 23348 հ.դրամ, ոչ ռեզիդենտների շահութահարկի գծով 1936 հ.դրամ:

Այլ հարկերի և պարտադիր վճարների գծով պարտավորության մնացորդը կազմում է 115320 հ.դրամ , որից եկամտային հարկ 110266 հ.դրամ, սոցիալական վճարների գծով 3140 հ.դրամ և այլ հարկերի գծով 1914 հ.դրամ:

12. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

հազար դրամ	31.12.2014	31.12.2015
Ընթացիկ հաշիվ ՀՀ դրամով	6799	50624
Այլ դրամական հաշիվ	-	245
Ընթացիկ հաշիվ Եվրոյով	222467	43173
Ընթացիկ հաշիվ ԱՄՆ դոլարով	259	4896
Ընթացիկ հաշիվ ռուսական ռուբլով	5510	10701
Դրամարկղ ՀՀ դրամով	591	313
Ընդամենը	235626	109952

Դրամական միջոցների և դրանց համարժեքների հետ կապված պարտքային և արժույթային ռիսկերին Ընկերության ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթագրություն 24-ում:

13. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 2,660,000 հազար (երկու միլիարդ վեց հարյուր վաթսու միլիոն) ՀՀ դրամ, որը կազմում է 35 սովորական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 76,000 հազար ՀՀ դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնետոմսերը տեղաբաշխված են և լրիվ վճարված:

14. Վարկեր և փոխառություններ

Սույն հոդվածում 31.12.2015թ. դրությամբ առկա 112530 հազար ՀՀ դրամը իրենից ներկայացնում է Արդշինբանկի կողմից տրամադրված 200000 հ.դրամ (մայր գումար) կարճաժամկետ վարկ (օվերդրաֆտ): Վարկը տրամադրվել է սպառման նպատակով օգտագործելու համար: Վարկը տրամադրվել է տարեկան 17% դրույքաչափով մինչև 18.12.2016թ

15. Հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ**15.1 Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները կապված են ստորև նշված հոդվածների հետ.

Հազար դրամ

	Հետաձգված Հարկային Պարտավորության մնացորդ		Հետաձգված Հարկային ակտիվի մնացորդ		Հաշվետու Ժամանակաշրջանում ճանաչված աճ (նվազում)	
	31.12.14	31.12.15	31.12.14	31.12.15	Ակտիվ	Պարտ.
Հիմնական միջոցների գծով	491218.0	520728				29510.0
Ընթացիկ պահուստ			11251	10693	(558)	
Ընդամենը	491218.0	520728	11251	10693	(558)	29510.0

15.2 Փոփոխություններ ժամանակավոր տարբերություններում տարվա ընթացքում

Հազար դրամ

Հարկվող ժամանակավոր տարբերություն				Նվազող (հանվող) ժամանակավոր տարբերություն			
	31.12.14	2015թ. ճանաչված	31.12.15		31.12.14	2015թ. ճանաչված	31.12.15
Հիմնական միջոցներ գծով	2456090.0	147550.0	2603640	Պահուստ Արձակուրդի գծով	56253.0	(2790)	53463
Ընդամենը	2456090.0	147550.0	2603640	Ընդամենը	56253.0	(2790)	53463

16. Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր

հազար դրամ	31.12.2014	31.12.2015
Ծառայությունների և այլ գնումների գծով	34187	35223
Ստացված կանխավճարներ	69033	105384
Այլ կրեդիտորական պարտքեր ա.թ.	10292	41673
Պարտքեր ապահովագրավճարների գծով	8843	40684

Ընդամենը	113512	182280
-----------------	--------	--------

Առևտրական կրեդիտորական պարտքերի հետ կապված իրացվելիության ռիսկերի վերլուծությունը նկարագրված է ծանոթագրություն 24-ում:

17. Հասույթ

հազար դրամ	2014թ.	2015թ.
Աէրոնավիգացիոն ծառայությունների մատուցումից ա.թ.	4991007	4483398
թոփք-վայրեքիչ հասույթ	2521298	2205263
Տարանցիկ չվերթներից հասույթ	2469709	2278135
Այլ գործունեությունից հասույթ	3978	2731
Ընդամենը	4994985	4486129

18. Վաճառքի ինքնարժեք

հազար դրամ	2014թ.	2015թ.
Նյութածախս	108845	130164
ա.թ էլ.էներգիա	41525	48628
ա.թ գազ	1817	1696
Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ	2106241	2071667
Հիմնական միջոցների մաշվածություն	553430	533816
Հիմնական միջոցների նորոգում, սպասարկում	13036	22630
Ոչ նյութական ակտիվների ամորտիզացիա	8582	9082
Գործուղման ծախսումներ	97462	108632
Կադրերի վերապատրաստման ծախսումներ	49716	58794
Կարգավարների բուժ. ստուգման ծախսումներ	41461	41287
Թոփքների սարքավորումների աշխատանքների ստուգման ծախսումներ	37372	37014
Հետերաշխիքային սպասարկում	53603	92588
Ընթացիկ վերանորոգում	5234	2053
Կապի ծառայություն	39911	37167
Այլ	8710	8984
Ընդամենը	3123603	3153878

19. Վարչական ծախսեր

հազար դրամ	2014թ.	2015թ.
Աշխատավարձ և սոցիալական ապահովության վճարներ	197505	208416
Հիմնական միջոցների մաշվածություն	14632	8891
Կոմունալ և գրասենյակային ծախսեր	27019	30355
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	31022	30691
Բանկային ծառայությունների և ապահովագրության ծախսեր	14256	14093
Առևտրական և խորհրդատվական ծախսեր	25031	24435
Արհմիության ծախսեր	10100	

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Աշխատողների տեղափոխման տրանսպորտային ծախսեր	10848		10848
Կադրերի վերապատրաստում	2682		4685
Այլ	9190		13776
Ընդամենը	342285		346190

20. Այլ եկամուտներ

<i>հազար դրամ</i>	2014թ.		2015թ.
Այլ ակտիվների վաճառքից	-		134
Գործառնական վարձակալությունից	2350		2350
Տույժեր, տուգանքներից	15880		17759
Նյութական վնասի փոխհատուցումից	2020		2079
Տոկոսային եկամուտ(բանկային հաշիվների մնացորդներից)	5697		8902
Տոկոսներ ավանդագրված գումարներից	14608		12359
Անհուսալի կրեդիտորական պարտքի դուրս գրում	270		
Դուրս գրված դեբիտորական պարտքի մարումից			13886
Վաստակած արձակուրդային գծով եկամուտ	15015		2791
Այլ	1344		2833
Փոխարժեքի տարբերությունից եկամուտ	26773		
Ընդամենը	83957		63093

21. Այլ ծախսեր

<i>հազար դրամ</i>	2014թ.		2015թ.
Այլ ակտիվների վաճառքի ծախսեր			247
Գործառնական վարձակալության տրված ՀՄ մաշվածություն	3504		3504
Գործառնական վարձակալությունից այլ ծախս	690		671
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի ծախս	53403		
Անհուսալի դեբիտորական պարտքի դուրս գրում	66447		216793
Տույժեր տուգանքներ	10		134
EUROCONTROL-անդամավճար	138986		126966
Տրված նյութական օգնություններ, նպաստներ	24837		24262
Զփոխհատուցվող հարկեր, տուրքեր	22664		17794
Գործառնական այլ ծախսեր	692		304
Վարկի տոկոս	14215		446
Փոխարժեքի տարբերությունից ծախս			89954
Ստուգման ակտի արդյունքներով			35443
Ընդամենը	325448		516518

22. Շահութահարկի գծով եկամուտ (ծախս)

<i>հազար դրամ</i>	2014թ.	2015թ.
Ընթացիկ շահութահարկի գծով ծախս	224248	145626
Հետաձգված հարկի գծով ծախս՝ կապված ժամանակավոր տարբերությունների առաջացման և մարման հետ	26025	30068
Ընդամենը	250273	175694

22.1 Շահութահարկի փաստացի (գործող) տրոստադրույքի համապատասխանեցում.

հազար դրամ	2014թ.	%	2015թ.	%
Շահույթ (վնաս) նախքան հարկումը	1287606		532636	
Շահութահարկ ընթացիկ դրույքաչափով	257521	20	106527	20
Զուտ (չհարկվող եկամուտներ)չնվազեցվող ծախսեր	(7248)	(0.56)	69167	12.99
Ընդամենը	250273	19.44	175694	32.99

Ընկերության կիրառվող հարկի դրույքը 20% է

23. Կապակցված կողմերի գործարքներ

23.1 Առանցքային կառավարչական անձնակազմի հատուցումներ

Կապակցված կողմ հանդիսացող՝ <Ավիաբուժ> Բ/Կ ՓԲԸ ,բացի 6-րդ կետում նշված գործարքից՝ իրականացվել է նաև 54968.1 հ.դրամի առևտրային գործունեություն՝ ստացվել է բժշկական ծառ-ն:

Կապակցված կողմ հանդիսացող՝ <Ավիաուսմնական կենտրոն> ՓԲԸ , իրականացվել է 5200.2 հ.դրամի առևտրային գործունեություն՝ կադրերի վերապատրաստման ծառայություն:

Տնօրենի և առանցքային կառավարչական անձնակազմի այլ անդամների վարձատրությունը 2015 թ. հետևյալն է եղել:

հազար դրամ	2014թ		2015թ
Աշխատավարձ և դրան հավասարեցված այլ վճարներ	111415		120428

24.Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղությունները

24.1 Ընդհանուր ակնարկ

Ընկերությունը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Ընկերության ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Ընկերության նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Ընկերության ռիսկերի կառավարման ռազմավարությանն ու ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերությունը, վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

24.2 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտականությունների չկատարմամբ, Ընկերության համար կառաջացնի ֆինանսական կորուստ, և հիմնականում առաջանում է Ընկերության պատվիրատուներից ստացվելիք դեբիտորական պարտքերից և տրված փոխառություններից:

Առևտրական դեբիտորական պարտքերը հիմնականում ընդգրկում են ապրանքների վաճառքի դիմաց ստացվելիք գումարները:

Ֆինանսական գործիքներից առաջացող պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	31.12.2014թ.	31.12.2015թ.
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր (Ծնթ.10)	969261	722195
Դրամական միջոցների և դրանց համարժեքների (Ծնթ.13)	235626	109952
	<u>1204887</u>	<u>832147</u>

24.3 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Ընկերության մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Ընկերությունը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

24.4 Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, բաժնետոմսերի գները, կազդեն Ընկերության շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է. շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժույթային ռիսկ

Ընկերությունն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժույթային

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ռիսկին ենթարկվածություններն Ընկերությունը չի կառավարում:

Ընկերության արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են.

Ֆինանսական ակտիվ/պարտավորություն	31.12.2014			31.12.2015		
	USD	EUR	RUR	USD	EUR	RUR
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	533.46	385250.68	676189.58	10120.66	81760.06	1616470.51
Առևտրական և այլ դեբիտորական պարտքեր	10000	2118490.76			1366497.17	
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	(123.93)	(153976.86)		(1489.43)	(239063.29)	
Ստացված վարկեր և փոխառություններ		(227000)				
Արտարժույթային զուտ ենթարկվածություն	10409.53	2122764.58	676189.58	8631.23	1209193.94	1616470.51

Հաշվետու ամսաթվի դրությամբ ԿԲ սահմանած փոխարժեքները, ինչպես նաև տարվա ընթացքում կիրառված միջին փոխարժեքները ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքը		Հաշվետու ամսաթվի փոխարժեք	
	2014 թ	2015թ	31.12.2014թ	31.12.2015թ
Դրամով				
1 ԱՄՆ Դոլար	415.66	477.82	474.97	483.75
1 ԵՎՐՈ	551.95	530.67	577.47	528.69
1RUR	10.98	7.90	8.15	6.62

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Ընկերությունն ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև մարումն ընկած ակնկալվող ժամկետում Ընկերության համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

Ընկերությունն ունի տոկոսակիր ֆինանսական ակտիվներ տեղաբաշխված ավանդների ձևով, սակայն չի կառավարում տոկոսադրույքային ռիսկը:

25.Գործառնական վարձակալություն

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունն ունի վարձակալության տրված արտադրական տարածք (կապի հանգույցի համար) և տրանսպորտային միջոց:

2015թ. ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Տարվա ընթացքում եկամուտ ճանաչված վարձակալական վճարները բացահայտված են ծանոթագրություն 20-ում: Պայմանական վարձավճարներ չկան:

Ընկերությունն ունի նաև իր կողից վարձակալած տարածք, որի տարեկան վարձավճարը կազմում է հազ.671.2 դրամ:

26.Ֆինանսական գործիքների իրական արժեք

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել իրազեկ և պատրաստակամ և անկախ կողմերի միջև գործարքում: Այնուամենայնիվ, հաշվի առնելով անորոշությունները և սուբյեկտիվ դատողությունների օգտագործումը, իրական արժեքը չպետք է մեկնաբանվի որպես մի գումար, որը հնարավոր կլինի ստանալ ակտիվների անհապաղ վաճառքից կամ պարտավորությունների մարումից:

Ղեկավարությունը գտնում է, որ ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

Իրական արժեքը որոշվում է՝ զեղչելով համապատասխան դրամական միջոցների հոսքերը՝ օգտագործելով նմանատիպ գործիքների գծով շուկայական տոկոսադրույք:

27.Պայմանական դեպքեր

27.1 Դատական գործեր

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության դեմ հարուցված դատական գործեր չկան, սակայն ընկերության կողմից 561 729.80 հազար դրամ պահանջի վերաբերյալ դատական հայցերը, այդ թվում <<Էլբրուս Ավիա>> - 6.305,0 ԱՄՆ դոլար կամ 3050.0 հազար դրամ <<Բաշկիրյան ավիաուղիներ>> - 957,73 եվրո կամ 506,3 հազար դրամ <<Կուբանի ավիաուղիներ>> - 2.412,0 եվրո կամ 1275,2 հազար դրամ <<Արմավիա Ավիաընկերություն>> ՍՊԸ - 638,689,38 եվրո կամ 337668.7 հազար դրամ <<Աերոսվիտ>> - 5.028,0 եվրո կամ 2658.2 հազար դրամ << Էյր Արմենիա>> ՓԲԸ-409637.7 եվրո կամ 216571.4 հազար դրամ

27.2 Երաշխավորություններ

Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության կողմից տրամադրված երաշխավորություններ չեն եղել:

27.3 Ապահովագրություն

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Ընկերությունն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ հնարավոր միջադեպերի արդյունքներից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

27.4 Հարկային անորոշություններ

Հարկային համակարգը ՀՀ-ում նույնպես համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Ընկերության հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Ընկերության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա:

Գլխավոր տնօրեն

Ա. Գասպարյան



Գլխավոր հաշվապահ

Կ.Հակոբյան

03.03.2016թ